ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ

Ղ Ե Կ Ա Վ Ա Ր

Երևան – 10, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 1

« » 2019 թ. N

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ - ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
պարոն ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Գալստյան

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 77-րդ հոդվածի՝ Ձեզ ենք ներկայացնում «Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Պ-123-30.04.2019-ԱՍ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունը:

Հարգանքով՝

ԷԴՈՒԱՐԴ ԱՂԱՋԱՆՅԱՆ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Պ-123-30.04.2019-ԱՍ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը «Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում լրացում կատարելու մասին» (այսուհետ՝ նախագիծ) Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ հայտնում է հետևյալը.

Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգիրք) լրացվող 192-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն աշխատավարձը վճարվում է Հայաստանի Հանրապետության արժույթով և կարող է վճարվել կանխիկ կամ անկանխիկ՝ բանկային վկայագրով, չեկերով կամ աշխատողի նշած բանկային հաշվին դրամական փոխանցումով:

Օրենսգրքով աշխատավարձի վճարման այլընտրանքային եղանակների նախատեսումն ինքնանպատակ չէ, այլ պայմանավորված է նրանով, որ գործատուն և աշխատողը պետք է հնարավորություն ունենան իրենց համար նախընտրելի եղանակով, թե՛ սուբյեկտիվ և թե՛ օբյեկտիվ պատճառներից ելնելով, ընտրեն աշխատավարձի վճարման կանխիկ կամ անկանխիկ ձևը:

Նախագծի հիմնավորման մեջ նշված պնդումն առ այն, որ Հայաստանի Հանրապետության հարյուրավոր բնակավայրերում, որտեղ չկան բանկային մասնաճյուղեր կամ բանկոմատներ, արդեն իսկ տասնյակ հազարավոր մարդիկ իրենց աշխատավարձն ստանում են անկանխիկ եղանակով, արդարացված չէ: Նախագծով առաջարկվող՝ 10 և ավելի աշխատակիցներ ունեցող գործատուների կողմից բացառապես անկանխիկ եղանակով աշխատավարձի վճարումը նմանատիպ բնակավայրերում աշխատող բազմաթիվ այլ անձանց համար գործնականում կարող է էական խոչընդոտներ և դժվարություններ առաջացնել:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից մշակվել և շահագրգիռ մարմինների քննարկմանն է

ներկայացվել «Անկանխիկ գործառնությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և հարակից օրենքների նախագծերի փաթեթ, որով մասնավորապես առաջարկվում է կիրառել օրենքով և աշխատանքային պայմանագրերով սահմանված աշխատավարձերի վճարումն անկանխիկ եղանակով իրականացնելու փուլային եղանակ՝ անկախ գործատուների մոտ գրանցված աշխատողների թվից:

Հաշվի առնելով վերոշարադրյալը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունն առաջարկում է առայժմս ձեռնպահ մնալ նախագծի քննարկումից և դրա դրույթներին անդրադառնալ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից մշակվող և առաջիկայում Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի քննարկմանը ներկայացվելիք օրենսդրական նախաձեռնության քննարկումների շրջանակներում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 հունիսի 2019 թվականի N 748 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ (ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ) ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 66-րդ հոդվածի 2-րդ մասը՝

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի տեղակալ Ավագ Ավանեսյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում «Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը (*Պ-123-30.04.2019-ԱՍ-011/0*) քննարկելիս Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

2019 թ. հունիսի 13
Երևան

ՆԱԽԱԳԻԾ

Պ-123-30.04.2019-ԱՍ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 2004 թվականի նոյեմբերի 9-ի ՀՕ-124-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 192-րդ հոդվածի 2-րդ մասը լրացնել նոր նախադասությամբ.

«Այն գործատուները, ովքեր ունեն 10 եւ ավելի աշխատողներ, աշխատավարձի վճարումները կատարում են անկախնիկ եղանակով»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2020թ. հունվարի 1-ից:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

1.Ընթացիկ իրավիճակը և իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը.

Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում փոփոխությունների կատարումը պայմանավորված է Հայաստանի Հանրապետությունում աշխատավարձերի վճարման գործընթացը համակարգված ու արդյունավետ իրականացմամբ, ոլորտում ժամանակակից տեխնոլոգիաների ներդրմամբ, ինչպես նաև քաղաքացիներին անկանխիկ գործարքների ուղղորդմամբ, որը կհանգեցնի ստվերային տնտեսության էական կրճատման:

2.Առաջարկվող կարգավորման բնույթը.

Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում փոփոխությունների կատարելու մասին օրենքով առաջարկվող փոփոխությունների պատճառներն են.

1.Միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ տնտեսապես և տեխնոլոգիապես զարգացած երկրների մեծ մասում աշխատավարձերի վճարումը իրականացվում է բացառապես անկանխիկ եղանակով: Այս առումով նշենք, որ մեր երկրում այս առթիվ չեն կարող խնդիրներ առաջանալ, քանի որ քարտով վճարումների մշակույթը Հայաստանում տարածվել է աստիճանաբար՝ 2000-ականների սկզբից և էականորեն նպաստել է անկանխիկ վճարումների ծավալի մեծացմանը: Ներկայումս Բավականին բարձր է գնահատվում նաև մասնավոր հատվածում աշխատավարձերի, ինչպես նաև կենսաթոշակների անկանխիկ վճարման տեսակարար կշիռը:

Բանկային համակարգը բավականի զարգացած է ոչ միայն մայրաքաղաքում, այլև ՀՀ մարզերում, բացիայդ, արդեն իսկ անկանխիկ աշխատավարձի վճարումը բավական չափով ներդրված է ողջ երկրում,

մասնավորապես պետական հատվածում գրեթե ամբողջապես և զգալի չափերով նաև մասնավոր

հատվածում:

2. Գաղտնիք չէ, որ ՀՀ-ում առկա է բավականին մեծ չափով ստվերային տնտեսություն, որի առկայությունը նաև զգալի չափով պայմանավորված է մանրածախ ոլորտում կանխիկ շրջանառության առկայությամբ: Այս քայլով վստահաբար կնվազեցվի նաև կանխիկի շրջանառությունը, քանի որ անկանխիկ

ստացած աշխատավարձով անկանխիկ գնումները կլինեն շատ ավելին, քան այն դեպքում, երբ քաղաքացին ստանում է աշխատավարձը կանխիկով և ըստ էության հազվադեպ կլինեն դեպքերը, երբ նրանք այդ գումարը կգցեն հաշվեհամարների վրա և կօգտագործեն անկանխիկ եղանակով:

3. ՀՀ բանկային և անկանխիկ վճարումների համակարգերի զարգացվածության մակարդակը թույլ է տալիս անցնել ՀՀ տարածքում աշխատավարձերի անկանխիկ վճարման, քանի որ վճարային քարտերի թողարկումը և սպասարկումը հիմնականում իրականացվում է Արքա քարտերով վճարումների միասնական համակարգի միջոցով, որը ստեղծվել և ներդրվել է ՀՀ կենտրոնական բանկի և ՀՀ տարածքում գործող առևտրային բանկերի նախաձեռնությամբ: Համակարգի անդամ բանկերի կողմից թողարկվում և սպասարկվում են «Արմենիան Քարդ» քարտերով վճարումների միասնական համակարգի ԱրՔա տեղական քարտեր, Վիզա կամ ՄաստերՔարդ միջազգային քարտային համակարգի քարտեր: ՀՀ տարածքում սպասարկում են նաև DINERS CLUB, AMEX միջազգային քարտային համակարգի ինչպես նաև HSBC խմբի քարտեր:

Բացի այդ ԱրՔա վճարային համակարգի շրջանակներում՝ ԱԳՄ–ի միջոցով քարտապանները բացի կանխիկ գումարի ստացումից, կարող են նաև կատարել կոմունալ վճարումներ (գազի, ջրի, հեռախոսի, էլեկտրաէներգիայի դիմաց), դիտարկել քարտային հաշվի մնացորդը, իրականացնել բջջային հեռախոսների լիցքավորման քարտերի դիմաց վճարումներ, իսկ ԱրՔա քարտերով վճարումների միասնական համակարգի կողմից 2003թ.-ից ներդրվել են՝ Ինտերնետի միջոցով կոմունալ վճարումների կատարման, հեռախոսային քարտերի դիմաց վճարումների կատարման ծառայությունները, իսկ 2004թ.-ից՝ ստեղծվել է ինտերնետ միջավայրում գրանցված որոշ ինտերնետ-խանութներում վճարումների կատարման հնարավորություն: 2005թ. սեպտեմբերին ներդրվել է Ինտերնետի միջոցով «ԱրՔա» քարտային հաշվից մեկ այլ քարտային հաշվի վրա փոխանցումների կատարման մեխանիզմը:

4. Չնայած այս խնդիրներին անկանխիկ եղանակով եկամուտներ ստանալու և ծախսեր կատարելուն նպաստել են մի կողմից պետության աստիճանական սահմանափակումները, իսկ մյուս կողմից՝ ենթակառուցվածքների զարգացումն ու անկանխիկ ծառայությունների մատչելիությունը: Աղյուսակ 1-ում ներկայացված է ՀՀ-ում վճարային քարտերի տարածումը 2010-2018թթ.

Աղյուսակ 1. Հայաստանի Հանրապետությունում վճարային քարտերի տարածումը, 2010-2018թթ.

Տարեթիվ ԱրՔա քարտ VISA Master Card Այլ քարտեր Ընդամենը

2010 306070 269771 115943 37514 729298

2011 391936 363691 181455 40354 977436

2012 492126 520703 264539 45581 1322949

2013 564503 652398 299815 46019 1562735

2014 546509 712211 320653 44684 1624057

2015 548521 789150 344365 47321 1729357

2016 521273 587671 416147 45667 1570758

2017 566768 608583 493796 45532 1714679

2018 629001 806299 545705 43065 2024070

Վերը նշված օրինաչափությունները հատուկ են ոչ միայն Հայաստանին, այլ աշխարհի մնացած երկրներին և պայմանավորված են առաջին հերթին տեխնոլոգիաների զարգացմամբ: Անկանխիկ վճարումների ոլորտում առավել առաջատար են տեխնոլոգիապես զարգացած երկրները:

Աղյուսակ 2-ում ներկայացված են ՀՀ-ում բանկային քարտերով գործարքների քանակն ու ծավալը:

Աղյուսակ 2. Հայաստանի Հանրապետությունում քարտերով գործարքների քանակն ու ծավալը

Տարեթիվ Քարտերով կատարված գործարքների

թիվը, հատ

Քարտերով կատարված գործարքների ընդհանուր

ծավալը, մլն. դրամ

2010 547 925 11 291 974

2011 723 355 14 570 207

2012 916 016 18 608 087

2013 1 009 679 20 518 209

2014 1 274 806 24 822 723

2015 1 440 055 29 747 907

2016 1 410 268 31 285 948

2017 1 576 818 36 223 175

2018 1 932 804 48 124 760

Վերջին տարիներին կտրուկ առաջընթաց են ապահովել այն երկրները, որոնք մեծ ներդրումների միջոցով կարողացել են ստեղծել ենթակառուցվածքների համալիր, ընդհուպ մինչև ունիվերսալ վճարային համակարգեր (օրինակ՝ Չինաստանը):

Աղյուսակ 3-ում ներկայացված է անկանխիկ շրջանառությամբ աշխարհի առաջատար երկրները

Աղյուսակ 3. Անկանխիկ շրջանառությամբ աշխարհի առաջատար երկրները

Երկիր Դեբետային քարտեր ունեցող քաղաքացիների տեսակարար կշիռը, %

Սպառողական ծախսերում դեբետային քարտերով կատարված անկանխիկ վճարումների ծավալը, %

Բելգիա 86 93

Ֆրանսիա 69 92

Կանադա 88 90

Մեծ Բրիտանիա 88 89

Շվեդիա 96 89

Ավստրալիա 79 86

Նիդերլանդեր 98 85

ԱՄՆ 72 80

Գերմանիա 88 76

Հարավային Կորեա 58 70

Վերջին տարիների ընթացքում ամենամասշտաբային աճն անկանխիկ դրամաշրջանառության ոլորտում ապահովել է Չինաստանը, որին հաջողվել է թերզարգացած բանկային համակարգի պայմաններում թռիչքաձև կրճատել կանխիկ վճարումների ծավալը:

Այս նպատակի համար Չինաստանը ներդրել է հատուկ նույնականացման ունիվերսալ քարտեր, որը ոչ միայն փոխարինում է անձնագրին, դիպլոմին, անցագրին, այլև՝ հանդիսանում է վճարային քարտ և սպասարկվում է հատուկ արտադրված POS-տերմինալների կողմից: Այն սպասարկում է QR-կոդի օժանդակությամբ և կարճ ժամանակահատվածում լայն տարածում է գտել երկրում:

Համակարգի արագ ներդրմանն ու տարածմանը նպաստել են ոչ միայն Չինաստանի կառավարության համապատասխան որոշումները, այլև AliPay

համակարգը, ինչի շնորհիվ քարտապանները կարողացել են ազատորեն օգտվել AliBaba և AliExpress առցանց խանութներից:

5. Այս օրենսդրական փոփոխությունը խնդիր չի առաջացնի նաև քաղաքացիների մոտ կանխիկի ձեռքբերման մասով, քանի որ նախ ՀՀ-ը 100000 բնակչի հաշվով բավականին լավ ցուցանիշ ունի բանկոմատների հասանելիության մասով, բացի այդ բանկային համակարգի հետագա զարգացումը և այս օրենսդրական նախաձեռնությունը վստահաբար կհանգեցնեն նոր բանկոմատերի ներդրման:

Աղյուսակ 4. Բանկոմատների հասանելիությունը մի շարք երկրներում (100000 բնակչի հաշվով)

Մակաո, Չինաստան 313.15 Հայաստան 63.69

Կանադա 227.82 Լատվիա 61.88

Պորտուգալիա 168.04 Հունաստան 61.53

Ռուսաստան 163.93 Արգենտինա 59.39

Ավստրալիա 162.01 Բելառուս 55.63

Խորվաթիա 140.38 Մեքսիկա 53.53

Իսրայել 121.26 Դանիա 50.06

Ուկրաինա 97.67 Լիտվա 46.75

Թուրքիա 78.12 Մոլդովա 36.74

Իրան 76.49 Ղրղզստան 33.43

Վրաստան 75.93 Ադրբեջան 32.13

Ղազախստան 74.60 Ալբանիա 31.47

Էստոնիա 67.99 Աֆղանստան 1.27

6. Հոդվածով սահմանված 10 և ավել աշխատողների թվի տրամաբանությունը բխում է «Փոքր և միջին

ձեռնարկատիրության մասին պետական աջակցության մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին

մասից:

7. Անկանխիկ աշխատավարձով վճարումը ինքնաբերաբար կբերի նրան, որ այլևս չի լինի այն արատավոր պրակտիկան, որը առկա է կանխիկ վճարումների դեպքում, մասնավորապես երբ աշխատավարձի մնացորդային մասը, որի վճարումը կատարվում է մետաղադրամների տեսքով, հաճախ անհասկանալի և չգիտես ինչու «ընդունված պրակտիկայով» մնում են հաշվապահին, ով կատարում է այդ վճարումը:

8. Հայաստանի Հանրապետության հարյուրավոր բնակավայրերում, որտեղ չկան բանկային մասնաճյուղեր կամ բանկոմատներ, արդեն իսկ տասնյակ հազարավոր մարդիկ իրենց աշխատավարձը ստանում են անկանխիկ եղանկով, մասնավորապես դպրոցներում, համայնքապետարաններում, մանկապարտեզներում, մշակույթի տներում վաղուց արդեն անցել են անկանխիկ աշխատավարձի վճարման, ինչը չի առաջացրել որևէ խնդիր:

Առաջարկվող կարգավորումը

Առաջարկվում է որպես պարտադիր պահանջ սահմանել 10 և ավել աշխատող ունեցող

կազմակերպություններում աշխատավարձի վճարումը անկանխիկ եղանակով:

Ակնկալվող արդյունքը

Նախագծի ընդունումը հնարավորություն կտա որոշակիորեն ավելացնել անկանխիկ շրջանառության ծավալը մանրածախ առևտրում և ծառայությունների ոլորտում, ինչը կհանգեցնի ստվերային տնտեսության կրճատման և բյուջեյի մուտքերի ավելացման, ինչպես նաև կզարգացնի անկանխիկ առևտրի մշակույթն ու կվերացնի այն արատավոր պրակտիկան, որը գործնականում առկա է որոշ ընկերություններում, երբ աշխատավարձի մնացորդային հատվածը, որը պետք է վճարվի մանրադրամներով, չի վճարվում քաղաքացուն: